

կեան, յեւդոկիա, Տաղարան, Թ. 4, էջ 81—103 (սկիզբը պակաս). ասկէ արտագրութիւն մը հոգացած է ինձ Աւետիս Սահակեան (1913):

2. Օրինութիւնք եւ Քաղուածք տօնից եւ տէրունականաց եւ ամենայն սրբոց. զոր սահմանեաց սուրբ հայրապետն Մովսէս ի փառս Աստուծոյ:

ԳԿ. Երգեցէք որդիք Սիրոնի: Էակից Հօր եւ Հոգւոյն...:

Ձեռագիր՝ Էջմ. 2412, էջ 846—870 (Ժէ):

Այս աշխատութեանս մասին տես վերապոյն, էջ 171:

3. Թուղթ առ Գրիգոր Կեսարացի:

Տես վերապոյն, էջ 28—33:

4. Թուղթ առ Ազոստինոս Բաշեցի:

Տե՛ս վերը, էջ 276—279:

5. Թուղթ առ վլատիսլաւ Բագաւոր:

Հմմտ. վերը, էջ 279—280:

6. Թուղթք առ Ուրբանոս Ը.:

Հմմտ. վերը 340 եւն:

7. Թուղթք երկու առ Գրիգոր վ. Դաւանադցի: Այս մասին կը գրէ Դարանաղցի. «որպէս տէր Մովսէս կաթողիկոսն լոյս հոգին երկու նամակ սիրով ողջունիւ եւ յորդորական բանիւք բազմօք առ ինձ ուղարկել (էր) եթէ կարողութիւն ունիս գալոյ, ե՛կ որ մարմնաւոր աչօք տեսանեմք զիրեարս» (471):

8. Կոնդակ Մաղարդայ վանքի:

Տե՛ս վերը, էջ 228—231: